

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀԱՄԱՍՏԵՂԻՆ

Կոստան Զարեանի ու ամերիկահայ գրող Համաստեղի (Համբարձում Կելենեան, 1895—1966) յարաբերութիւնը վկայող հինգ նամակներ պահպանուած են Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Պետական Քանգարանին մէջ (Համաստեղի Փոնտ, թիւ 103): Այդ նամակները Զարեանի կողմէ գրուած են 1934—1938 թուականներուն: Ստորեւ նոյնութեամբ կը հրատարակենք զանոնք, պահելով լեզուական եւ ուղղագրական բոլոր իւրայատկութիւնները:

Երկու գրողներուն յարաբերութիւնը սկսած է 1920ական թուականներուն, Զարեանի «Անցորդը եւ իր ճամբան»ի հրատարակութեան օրերուն, եւ ամրապնդուած է Համաստեղի Եւրոպայացելութեան միջոցին, երբ ան Զարեանին հանդիպած է Փարիզի մէջ, 1929-ին: 1938-էն ետք, այս կապին մասին յաւելելով մանրամասնութիւններ չկան: Բացառուած չէ, որ ուրիշ նամակներ գրուած ըլլան, որոնք յայտնի չեն, ինչպէս եւ ծանօթ չեն մեզի Համաստեղի պատասխանները:

Երկու գրողներ, որոնց ներաշխարհը տարբեր կազմաւորում ունէր, իմացական հետաքրքրութիւններու դաշտը՝ նոյնպէս, կարողացած են գտնել շփումի մտերիմ եւ գուրգուրոտ եզր մը, ինչպէս կը վկայէ այս նամակներուն ընթերցումը: Նկատելի է, նաեւ, Զարեանի բանաձեւած հաստատումներուն այժմէականութիւնը²:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԻԱՆ (Պուլնոս Այրէս)

Ա.

3-3-34
53 West 70th
N. York

Սիրելի Համաստեղ,

Ցաւում եմ որ այդքան ուշացայ սիրալիր նամակիդ պատասխանելու. գիտես, այս Նիւ Եորկ ասած տեղը կլանող է եւ մարդ ահագին ժամանակ է կորցնում ոչինչ բաների համար:

Շատ պիտի ուզէի գալ մի քանի օրով Բոստոն ձեզ ամէնքդ տեսնելու համար, բայց դժբախտութիւնը նրա մէջն է որ Ամերիկա չեմ եկել իբրեւ անկախ այցելու, որ ուզում է երկիրը տեսնել եւ վայելել, այլ իբրեւ խեղճ հայ գրագէտ, որ պէտք ունի հազար դուռ զարնելու իր եւ իր ընտանիքի ապրուստը ճարելու համար: Մտադիր եմ դասախօսութիւններ տալու ամերիկեան հասարակութեան առջեւ եւ զբաղւած եմ այդ հարցով: Մի երկու [1 բառ անընթեռնելի] թերթերի էլ ստիպւած եմ թղթակցել, օրւայ ապրուստը ապահովելու համար: Այս պայմաններում չեմ տեսնում ինչպէ՛ս կարելի է շարունակել վէպս, մանաւանդ որ ոչ միայն ողորմելի վճարումներ են անում, այլ նաեւ իրենց ունեցած բաւական մեծ պարտքը կապում վերջացնում են. 42 դոլարով³: Հայ գրագէտը ստեղծուած է թերթեր եւ հանդէսներ ապրեցնելու համար եւ ոչ թէ թերթիւր ստեղծուած են, ինչպէս ամէն տեղ, գրագէտը ապրեցնելու համար: Ու թողնենք ընդհանուր անհասկացողութիւնը, անպատրաստութիւնը, կուսակցական փոքրամտութիւնը եւ այլն: Դա ի՞նչ ահաւոր պատկեր է, սիրելի, այստեղի հայութեան պատկերը... Ի՞նչ կարող է մեզ ներշնչել այս միջավայրը եւ այս հոգեկան եւ մտաւոր թշուառութիւնը՝ ամէ՛ն կողմից, ամէ՛ն կողմից:

Կարծում եմ, որ եթէ լուրջ ճիգ չ'արւի արեւստի եւ գրականութեան շուրջը բնական մթնոլորտ ստեղծելու համար, հայ միտքը երթալով պիտի մեռնի եւ նրանք մեզանից որոնք մեռնել չեն ուզում պիտի դիմեն ուրիշ միջավայրի: Թերթի լեզուն, բովանդակութիւնը, գրելու ձեւը ուղ[ղ]ակի ինձ զրգւանք են պատճառում: Ու դա ի՞նչ արհամարհանք է զարգացած ամերիկացիներէ կողմից դէպի հայերը...

Ինչ որ է. մի օր կտեսնենք եւ այդ ամենի մասին կխօսենք:

Ես այստեղ շատ առանձնացած կեանք եմ վարում, ինչպէս միշտ. շատ քիչ հայեր եմ տեսել: Գրիր ինձ: Շնորհակալ եմ սիրալիր հրաւերիդ համար:

Սիրով և
Կ. Զարեան

Բ.

14—XII—35

Կորֆու

Սիրելի Համաստեղ,

Պատասխանս նամակիդ բաւական ուշացաւ: Ստիպւած եմ այնքան աշխատել, որ չես կարող երեւակայել, ի խնդիր գրականութեան եւ նաեւ ի խնդիր դրամի, որ պէտք է ամէն կողմ հասցնել:

Բարեբախտաբար, հրաշալի է այս կղզում, ամենագեղեցիկ վայրը որ երբեք տեսել եմ եւ նաեւ ամենաթանր... Իրաւ որ 15—20 դուարով մարդ կարող է լաւ ապրել եւ ի՞նչ առատութիւն, ի՞նչ պտուղ եւ ի՞նչ գինի: Պատրաստել էի գոնէ մի երկու ամսով Իտալիա գնալ, բայց ընտանիքս գրում է աւելի լաւ է տեղիցս շարժւում — դրութիւնը այնքան էլ լաւ չի, սաստիկ սրտաւրեւն եւ նաեւ ոստիկանական սաստիկ սեղմումներ: Ուստի մնացի եւ ըստպատում եմ: Իսկ Աթէնքը... Ձեռքս մի երկու օրաթերթեր ընկան եւ այդ միջակութիւնը այնպիսի զգւանք պատճառեց ինձ, որ որոշեցի ոտք չդնել այնտեղ: Մի օր պիտի ստիպւած լինեմ գնալու, թարմացնելու համար տպաւորութիւններս Երկիրներէ՝ երրորդ մասի համար, որ Յունաստանին է նւիր[ւ]ած, բայց առանց ոչ ոքի տեսնելու, ինչպէս այդ արի Ամերիկայում: Ու ճիշտ ասած հայութիւնը՝ աւելի շուտ հայութեան գաղափարը՝ հեռուից եմ սիրում. ամէն անգամ որ մօտենում եմ իրականութեան եւ մարդկանց՝ աշխարհի միւս ծայրը փախչելու է տալիս: Ի՞նչ ողորմելիութիւն, սիրելիս, ի՞նչ մըտաւոր խեղճութիւն...

Լսի՛ր, հեռախօսը ձեռքդ առ եւ այդ մեր Դարբինեանի⁴ մի խօսք հասկացրիր: Այդքան նիւթ եմ զրկած ու մինչեւ հիմա, չնայած տւած խոստումներին ոչ մի սենթ չեմ ստացել: Պայմանաւոր[ւ]ած էինք նաեւ որ այդ երանելի աւանսը մաս մաս, հինգ հինգ դուար, պիտի հանեն: Դրամի շատ պէտք ունիմ իմ ընտանիքիս համար: Հասկացրիր այնտեղ նստած այդ պաղեստինցիներին եւ պահանջիր որ դրամը շուտ զրկեն:

Դու ի՞նչ ես անում: Հաւերը՝ հասկացանք եւ ապագային պիտի ուտենք: Բայց դրանից դուրս: Այստեղ առած տեղեկութիւններից՝ Կորֆու տպագրութիւնը դեռ աւելի ատան է քան Աթէնք՝ 1000 օրինակ եւ 152 էջնոց, «Հայրենիք» ամսագրի ծաւալով գիրքը, նստում է 100 դուար: Այստեղի «Յոնիական Հրատարակչական յունական ընկերութիւնը», որ իմ բարեկամներն են, ամէն ամիս մի գիրք են տպագրում: Տպարանը հայերէն գրեր չունի, բայց ասում է

100 դով. կարելի է գնել եւ կմնայ մեր սեփականութիւնը: Ուստի, 200—300 դովարով լաւ հրատարակչական գործ կարելի է սկսիլ: Եթէ ուզում ես կարող եմ յունական հրատարակութիւններից ղրկել քեզ: Գրիր ամերիկեան գրքերի հետ ի՛նչ տարբերութիւն է անում եւ առհասարակ ի՞նչ ես մտածում: Կրկնում եմ նաեւ, որ 15—20 դովարով այստեղ կարող ես շատ լաւ ապրել: Ոչ Աթէնքում, բայց այստեղ այո: Եթէ գայիր՝ 100 դով. ճամբու ծախս՝ հրաշալի կլինէր եւ շատ բան կարող էիր անել: Ի՞նչ ես մտածում նաեւ հանդէսի մասին: Ամբողջ հարցը կազմակերպութեան հարց է, որի մէջ հս անկարող եմ: Բաւ է ասել, որ դու միակ հայն ես, որի հետ նամակագրութեան մէջ եմ. պաշտօնական նամակներին չեմ պատասխանում եւ առհասարակ մարդ չեմ ճանաչում:

Ուստի մտածիր եւ գրիր:

Այստեղ, շնայած տօթի աւերներին, ամբողջովին մանանայ է, ամէն տեղ հացիկներ, նարինջենիներ... Հրաշալի է:

Բարեւներ ընտանիքին, Օզանեանին՝ եւ միւսներին:

Մնամ սիրով
Կ. Չարեան

Գ.

3—5—36

Կորֆու

Սիրելի Համաստեղ,

Նամակդ բաւական ուշացաւ. չեմ նեղանում, ես ինքս ծոյլ նամակագիր եմ: Մի ժամանակ մտածեցի հիւանդ ես, բայց դուրս է գալիս որ աւելի վատ է՝ ստիպած ես նորից գիշերները աշխատիլ, պարտաւորած: Ասում եմ վատ, սակայն միւս կողմից ի՛նչ լաւ բան է գրողի համար գրականութիւնից նիւթապէս անկախ լինել, գրել երբ ուզում ես եւ մանաւանդ գրել մէկ սիրած բանդ: Այդ միշտ երազել եմ. երբեք չեմ կարողացել: Երեւակայիր օրը 8 ժամ գրում եմ եւ դեռ ընտանիքիս բոլոր պէտքերին չեմ հասնում: Սոսկալին մէկ նիւթից եւ մէկ լեզուից միւսին անցնելն է: Ուստի, ինչպէս տեսնում ես, ամէնքս էլ դժուար դրութեան մէջ ենք եւ լաւ է չկատաղւենք՝ կարող էր աւելի վատ լինել:

Շատ զգացած եմ Ամերիկա գալու պարագային գալ ագարակիդ մէջ ապրելու հրաւերիդ. առաջի անգամն է կեանքիս մէջ որ հայ գրողից այդպիսի հրաւեր եմ ստանում: Առհասարակ միայն թշնամութիւն եմ տեսել, ինչպէս գիտես: Իրաւ է, միշտ էլ նամակումդ ակնարկած խալիճիների կողմից, որոնք խալիճի դառնալուց առաջ էլ ճակատագրականօրէն ողորմելի էին: Ամէն բանի մէջ կարելի է խաբել՝ բացի արեւստից. իրականութիւնը միշտ մէջտեղ է գալիս: Բառեր կուտակելով գրականութիւնը չի ստեղծում. ներքին անապատը դուրս է պրծնում եւ քամիի եւ փոշիի վերածւում:

Մի հալա նայիր մեր այդ ողորմելի գրագրողները. մարդ ուղ[ղ]ակի սարսափում է: Բայց լաւ է այդ մասին իսկի շիօսել՝ յուսահատութիւն է գալիս:

Ուրախ եմ որ «Երկիրները» սիրած ես: Անցեալ օրը «Սպանիա» վերջացրի եւ վաղը միւս օրը կսկսեմ «Միացեալ Նահանգները»... Որով աւելի մօտ կլինեմ քեզ վերլիչելով մօտաւոր անցեալը: Եւ երբ այդ մասն էլ վերջացնեմ,

ուզում եմ գրել հել[լ]ենական կղզու վրայի մտածումներս, մի տեսակ համադրութիւն բոլոր մտածումներին⁶: Բարձր մտածումներ կեանքի առջեւ:

Իսկ վէպը առաջանում է դանդաղ կերպով⁷: Եւ մեր մէջ ասեմ. ա՛յնքան բանաստեղծութիւններ եւ պօեմներ են անցնում գլխովս, որ պիտի ուզէի գրի առնել, եթէ ժամանակ ունենայի: Ծշմարտութիւնը այն է որ օրերը փոքր են եւ մարդ պէտք էր տասը գլուխ եւ տասը կեանք ունենար...

Կղզին հրաշալի է. գարուն, ծաղիկներ, պայծառութիւն: Գեղեցիկ է երեւի նաեւ ագարակների մէջ: Չես ասում, ինչ ես գրում կամ ինչ ես պատրաստում գրելու: Սպասելու չէ: Գործերը դասաւորեմ, այս ունիմ այն ունիմ, յետոյ կը գրեմ, ասելու չէ. գրելու է՝ հակառակ ամէն բանին:

Մաննիկին բարեւներս արա եւ հասցէս մի տուր: Ո՞ր է. Եգիպտոս...⁸:

Հրատարակչականի մասին առայժմ չեմ էլ մտածում: Անշուշտ եթէ մի օր գամ, միասին մի բան կձեռնարկենք: Ի՞նչ է անում էջմիածինցին⁹. օղի շինե՞ց:

Գրիր: Ջերմ բարեւներ. յարգանքներս մայրիկիդ:

Սիրով
Կ. Զարեան

Մի բան ասեմ, երբեմն կարդացած հին ազերէն հանդէսները նետելու տեղ զրկիր ինձ: Էնպէս՝ կապը երկրի հետ չկորցնելու համար:

Գ.

27-2-37
Վիեննա

Սիրելի Համաստեղ,

Ինչքան նամակիցդ կարողացայ հասկանալ բաւականի կասկածանքով ես վերաբերում հիւանդութեանս: Դժբախտաբար ճիշտ է. ահաւոր ցաւեր ունեցայ եւ այդ ցաւերը նաեւ ազդեցին աչքերիս վրայ, ինչ որ շատ մտահոգութիւն պատճառեց ինձ: Կորֆուն գեղեցիկ է, աժան, բայց խոնաւ եւ դաւաճան. կարծեմ Քէոդիկն էլ՝ գրականութեան այդ վաշխառուն, որին պոլսահայերը մեծ ազգային հերոսի վերածեցին՝ նոյն կլիմայի զոհ գնաց¹⁰: Այժմ աւելի լաւ եմ, դժբախտաբար միջոցներ չունեմ ջուրերը գնալու, մի բան որ մտածելի է հայ իրականութեան մէջ հարուստներին եւ կուսակցական յայտնի գործիչներին:

Համա ասիր տեսնեմ. ամուսնանում ես, ամուսնացեալ ես թէ պիտի ամուսնանաս.— լաւ չհասկացայ: Ամենայն դեպս քո այդ որոշումն էլ մի ազգային հարց դարձաւ. տնաշէն, ի՞նչ ես կասկածում, առ եւ ամուսնացիր եւ այդ հարցին վերջ տուր:

Գրանից դուրս ի՞նչ ես անում՝ աշխատում ես եւ ի՞նչ ես գրում: Ինձ համար երազ պիտի լինէր կարողանալ չգրել. հայութիւն այնքան հեռու է այս վայրկեանին գրականութիւնից ինչքան մենք Արարատից: Ինչ ուզում ես ասիր՝ գիտեմ մոլեռանդ ես՝ բայց քաղաքական կուսակցութիւնները, որոնցից մինչեւ հիմա քաղաքական օգուտ էլ չկայ, ամէն ինչ սպանում են եւ, ասեմ, ազատ խօսքից աւելի են վախում քան կրակից: Այդ ինչպէս երեւում է ընդհանուր երեւոյթ է այն տեղ եւ իսկական, անշահախնդիր խորհողների գալիք դերն է մաքառել ամբողջ ուժով հասարակական մտքի համայն այն բրթացման եւ ստրկացումի դէմ:

Կարողում ես հայ թերթերի մեծ մասը.—ի՛նչ խեղճութիւն, ի՛նչ տգիտութիւն եւ ողորմելի մարդկանց այդքան հիւանդագին ինքնահաւանութիւն: Այնտեղ Հայաստանում եւ այստեղ՝ ամէն տեղ: Երբ մտածում եմ ուղղակի տանջում եմ. ինչպէս կարող է ամբողջ մի ժողովուրդ այդքան բարոյալքի, խեղճանայ, գորշանայ: Երեւակայիր նոյնիսկ ըմբոստացող երիտասարդութիւն իսկ չկայ, այդ երիտասարդութիւնը որ ուժ ունենայ արւածի դէմ կանգնել եւ իր մտաւորապէս տիրելու կամքը հաստատի: «Այսպիսի վախ է ազդում ինձ նաեւ վաղը, որովհետեւ այդքան շնչատ հոգեկան շարժումով, այդ մարդիկ ինչպէ՞ս պիտի կարողանան մեծ շարժումներ մղել եւ նոր ազգ կառուցանել: Վրացիները, դժբախտաբար, բոլոր մարզերում էլ մեզ գերազանցում են, որովհետեւ միշտ էլ մտաւոր ընտրանի են ունեցել եւ այդ բանից առաջ այդ մտաւոր ընտրանիի գոյութիւնը հանդուրժել են, իսկ մենք... Հաստատն այն է որ մեր մէջ այդ հարցերը գոյութիւն իսկ չունեն, դրանք զուր բաներ են եւ կարեւորը գաւառային եկեղեցական կամ դպրոցական հարցերն են՝ իմայ կազմակերպական: Իսկ ինչի՞ համար են կազմակերպում, ոչ ոք չգիտի:

Դժուար է եւ խեղդիչ:

Ի՛նչ ես մտածում այդ մասին.—մտածո՞ւմ ես այդ մասին:

Այս ամիս, այս երանելի հիւանդութեանս պատճառով, «Հայրենիքին» ղրկելիք «Երկրների» շարունակութիւնը պիտի մի քիչ ուշանայ: Գիշերները չեմ կարողանում քնել եւ առաւօտները միտքս այնքան ծանր է որ չեմ կարողանում աշխատել:

Դարբինեանին ասա որ Վիեննան իսկապէս գեղեցիկ է՝ մի քիչ մեղամաղձոտ եւ համլէթային՝ բայց մինչեւ հիմա դեռ չկարողացայ նրան վայելել:

Բարեւներ ամենուն

Մնամ քո

Կ. Զարեան

Ե.

5-6-38

Ասկօն

Սիրելի Համաստեղ,

Պօէմադի¹¹ կարդացի շատ մեծ հետաքրքրութեամբ. չէի կարող երեւակայել որ թումանեանական շունչը այդքան տիրական կերպով կարող է նուաճել մի տաճկահայի.—ինչ որ ցոյց է տալիս հայ ոգու միութիւնը, իր գլխաւոր գանգաձաներում, եւ որից դուրս են մնում միայն պոլսահայերը՝ հայ կեանքի այդ մտաւոր եւ հոգեկան ներկայ աղէտը...

Ցաւում եմ որ քաջութիւնը չես ունեցել մինչեւ վերջը գնալու. լեզուների քերականական կառուցուածքները միացնելու գաղափարը միանգամայն սըխալ է եւ անիրագործելի: Կարելի բան չէ տարբեր ոճով շինուած երկու շէնքեր կտրել եւ մէկ մէկի կպցնել. այդ կլինի անքնական եւ տգեղօրէն բռնազրոսիկ: Այդ կլինի ճեմաճեմօղիք մի լեզու, ինչպէս Շանթի լեզուն է, որ ոչ անցեալ ունի, ոչ ներկայ, եւ ոչ ապագայ: Կարելի է լեզուն բոլոր բարբառների աւանդներով եւ բառերով ճոխացնել, բայց կարելի չէ քերականական կառուցուածքը փոխել:

Պատմութեան բերումով արարատեան լեզուն, այսօր, ինչպէս անցեալում, կոչած է լինելու մեր պաշտօնական լեզուն եւ հայ ազգը միացնող լեզուն. մնացեալը պիտի կորչի, ինչպէս կորել են Տրանսիլվանիայի, Հնդկաստանի եւ հայոց ուրիշ գաղութների լեզուները: Դաշնակցութեան ամենամեծ սխալներից մէկը եղել է այդ շհասկանալը եւ թոյլ տալը որ մի քանի պոլսահայ կէս մտաւորականներ խաղան «մնացորդաց» [1 բառ անընթ.] լարերի վրայ եւ ամբոխավարեն իրենց մթին շահերը հետապնդելու համար: Բայց այն ինչ որ կուսակցութիւնները չեն կարողացել ընել, պէտք է որ հայ գրողը քաջութիւնը ունենայ անելու, ինչպէս արել է ժամանակին Դանտէն եւ ինչպէս արել են ուրիշները: Այդ մասին, անցողակի կերպով, «Սպանիական» շարքում երկար գրել եմ եւ հասկացողը հասկացել է:

Ուրախ եմ որ ամուսնացել ես եւ երջանիկ ես: Երեւակայում եմ քեզ հաւերիդ մէջ, խաղաղ եւ ժպտուն...

Իմ կեանքիս առաւելութիւնը այն է որ հայ շեմ տեսնում եւ այդպիսով անխառն կերպով կարող եմ մտածել եւ սիրել հայութիւնը: Կարողում եմ միայն «Հայրենիքները». դա ի՛նչ [1 բառ անընթ.] է. դա ի՛նչ լուրեր են... Քանի անգամ գրիչս ձեռքս եմ առել գրելու համար Բակունցի եւ ուրիշների մասին՝ որովհետեւ ինչպէ՞ս կարելի է լռել — բայց վար եմ դրել վախճալով որ կարող եմ նրանց վնաս բերել: Եղբայր, մէկը շկա՞յ որ այդ Բերիային կամ Ստալինին սատկեցնի: Ծշմարտութիւնը այդ է՝ ահաւոր ճշմարտութիւնը՝ որ մեր յայտնի տերորիստները իսկ այսօր կասկածելի են եւ հայ իրականութիւնը թոյնով եւ խաւարով լեցուն է...

Համբերութիւն եւ քաջութիւն
Մնամ սիրով
Կ. Զարեան

Ջերմ բարեւներ Դարբինեանին: Ի միջի այլոց — որ անդերէն գրող երիտասարդներին արժանի է քաջալերել՝ լաւ, բայց այդպէս փոշիների մէջ թաւալ գալով, վազել նրանց յաջողութեան սայլի ետեւից արդեօ՞ք հայ մտքի եւ գրականութեան զարգացման տեսակէտից այնքան նպատակայարմար է... Առաջ որբերն էին, յետոյ պոլսահայ բարբառն էր, յետոյ հայրենակցական միութիւններն էին եւ հիմա էլ դա է... Որովհետեւ Մամուլով գրելու տեղ մէկը իր անունը Մամուլեան է գրել, էլ հայ թերթերը լեցեցցին իր, իր հօր, իր մօր ճառերով. — Տեսէ՛ք, մենք Մամուլով շգրեցինք այլ Մամուլեան եւ... հայութիւնը փրկաւ՞՞ է:

էդպէս:

ՍԱՆՈՒԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Նամակները կը հրատարակուին պահպանելով բնագրին լեզուն եւ ուղղագրութիւնը: Առաջին եւ երրորդ նամակները հրատարակած ենք նախապէս. տե՛ս Վարդան Մատթէոսեան, «Միրելի Համաստեղ» (Երկու նամակ Կոստան Զարեանէն), «Հորիզոն — Գրական Ցաւելուած», Օգոստոս 1996: Հինգ նամակները թարգմանած եւ լոյս ընծայած ենք Նիւ Եորքի «Արարատ» եռամսեայի Կ. Զարեանին նուիրուած յաւելուածին մէջ. տե՛ս Costan Zarian, Five Letters to Hamasdegh, «Ararat» Quarterly, Spring 1994 (Համաստեղի ֆոնտը սխալմամբ նշանակուած է որպէս «թիւ 8»):

² Ֆե՛ս Վարդան Մատթէոսեան, Այժմէական հարցականներ (Կ. Զարեանի նամակները Համապարտեղի), «Ցառաջ — Միտք եւ Արուեստ», Նոյեմբեր 1992:

³ Կ. Զարեանի «Բանկօօպը եւ մամուլի ոսկորները» վէպը լոյս տեսած է «Հայրենիք» ամսագրին մէջ, Նոյեմբեր 1931էն մինչեւ Դեկտեմբեր 1933, եւ անաւարտ մնացած է: Առան-

ձին հատորով լոյս տեսած է Անթիլիաս, 1987ին, «Գ. Մելիտինեցի» գրական մրցանակի վերհրատարակութեան ֆոնտի կողմէ եւ Բարգէն Փափազեանի խմբագրութեամբ: Զարեանի եւ «Հայրենիք»-ի յարաբերութեան մասին, տե՛ս Վարդան Մատթէոսեան, Կոստան Զարեան եւ «Հայրենիք», «Յառաջ—Միտք եւ Արուեստ», Փետրուար 1995 եւ Նոյեմբեր 1995:

⁴ Ռուբէն Դարբինեան (1883—1968), «Հայրենիք»-ներու խմբագիրը:

⁵ Մեռուծան Օզանեան (1891—1966), «Հայրենիք»-ի աշխատակից:

⁶ «Երկիրներ եւ աստուածներ» ուղեգրութիւնը լոյս տեսած է «Հայրենիք» ամսագրին մէջ, Նոյեմբեր 1935էն մինչեւ Ապրիլ 1938, մնալով անաւարտ: Բաղկացած է հրկու մասերէ. «Սպանիա» եւ «Միացեալ Նահանգներ»: Ցայտնի չէ եթէ Զարեան գրած է Յունաստանի մասին: Մինչեւ օրս «Երկիրներ եւ աստուածներ» գիրքով հրատարակուած չէ:

⁷ Կ'ակնալիկ «Նաւը լերան վրայ»-ին, լոյս տեսած 1943ին, Պոստըն, «Հայրենիք»-ի տպարանէն:

⁸ Գրագիտուհի Մաննիկ Պէրպէրեան (1885—1960)՝ փիլիսոփայ Շահան Ռ. Պէրպէրեանի քույրը:

⁹ Էջմիածնեցի՝ «Հայրենիք» օրաթերթի աշխատակից Տրդատ Գազանճեանի (1892—1966) կեղծանունը:

¹⁰ Թէոդիկ Գործու ապրած է 1923ին:

¹¹ «Սրբազան կատակերգութիւն» վիպերգը լոյս տեսած է «Հայրենիք» ամսագրին մէջ 1938ին:

ВАРДАН МАТЕВОСЯН (БУЭНОС-АЙРЕС) — Письма Костана Заряна Амастегу. — Публикация писем Костана Заряна американо-армянскому писателю Амастегу раскрывает интересные страницы духовных и интеллектуальных пристрастий обоих. Хотя письма относятся к 30-м годам, связь между писателями началась многим ранее.